ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 սեպտեմբերի 2022 թվականի N 1356-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-Ի N 1086-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հուլիսի 14-ի «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Տավուշի Պատրիկ Տէվէճեան տարածաշրջանային քոլեջ» հիմնադրամի վերակազմավորելու մասին» N 1086-Ա որոշման հավելվածի՝

1) 41-րդ կետում «Հոգաբարձուների խորհրդի անդամի բացակայության դեպքում նրա իրավասություններն իրականացնում է նրա կողմից լիազորված անձը» բառերը փոխարինել «Փոխհատուցման վճարման կարգը սահմանում է հոգաբարձուների խորհուրդը» բառերով.

2) 43-րդ կետի 1-ին ենթակետում «մասնակցել հոգաբարձուների խորհրդի աշխատանքներին, մասնակցել նիստերին, կամ ապահովել պատշաճ կերպով լիազորված անձի ներկայությունը» բառերը փոխարինել «մասնակցել հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստերին» բառերով.

3) 50-րդ կետից հանել «, որոնք կարող են հանդես գալ նաև բացակա անդամների լիազորությամբ կամ կարող են մասնակցել նաև հեռակա կարգով՝ տեսակապի միջոցով» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

01.09.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ